

ԼՂՀ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ԾԵՂՔՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՂՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ*

ՄՅԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄՄՀ պատմության ամբիոնի դոցենտ

«Կաճառ» գիտական կենտրոնի ղեկավար

Հետադարձ հայացք ձգելով 21 տարի առաջ տեղի ունեցած իրադարձություններին, կարելի է համոզվել, որ Բերձորի ազատագրումը հիրավի ռազմավարական նշանակություն է ունեցել Արցախի համար՝ Ադրբեջանի զավթողական քաղաքականությանը դիմագրավելու և մարտնչող արցախահայության կենսապահովման առումներով: Ինչպես հայտնի է, Շուշիի ազատագրումից ու Ստեփանակերտին հարակից ադրբեջանական վտանգավոր կրակակետերի վնասազերծումից հետո Արցախի ինքնապաշտպանության ուժերը, հետմղելով հակառակորդի գրոհը եւ անցնելով հակահարձակման, ազատագրեցին շուրջ մեկ տարի առաջ կորուսված Բերդաձորի ենթաշրջանի հայկական գյուղերը, սպա՝ հետապնդելով ադրբեջանական նահանջող ստորաբաժանումներին՝ դուրս եկան Հայաստանի Հանրապետության սահմանը՝ դրանով իսկ ճեղքելով գրեթե քառամյա շրջափակման օղակը և իրականացնելով մեր ժողովրդի բազում սերունդների՝ մայր հայրենիքին միանալու երազանքը...

Խնդրո առարկա ռազմագործողության մասին հիշատակել են Արցախի ազատագրական պատերազմի և հատկապես մինչեւ 1992 թվականի կեսերը տեղի ունեցած իրադարձությունների մասին գրած հեղինակները[1]: Տողերիս հեղինակը եւս նախկինում թեմային անդրադառնալու առիթներ ունեցել է[2], սակայն նման հարցադրում առաջին անգամ է դիտարկվում:

Լաչինի միջանցքի ազատագրումից հետո ադրբեջանական կողմը, սովորության համաձայն, մեծ աղմուկ բարձրացրեց, թե իբր հայերը ոտնձգություն են անում Լաչինի նկատմամբ, որն իբր երբեք հայերին չի պատկանել: Մինչդեռ այն, ինչպես վկայում են հայկական մշակույթի նմուշների առկայությունը, գոյացել է հայաթափված հին գյուղի տարածքում: Մինչեւ 1923 թ. Լաչինը մի աննշան գյուղակ էր՝ Արդալյար անվամբ: 1923 թ. օգոստոսի 6-ից մինչեւ 1930 թ. Լաչինը հանդիսանում էր նորաստեղծ «Քրդական ուեզդի» կենտրոնը, որի վերացումից հետո այն դարձավ համանուն շրջանի կենտրոնը, որն, ի դեպ, ուներ նաեւ հայ բնակչություն...

Ինչքան էլ անդադրում գործեն ադրբեջանցի կեղծարարները, պատմական փաստերը համառ են ու անխախտ: Ակնհայտ փաստ է, որ ԼՂՀ Քաշաթաղի (նախկին՝ Լաչինի) շրջանը, որի տարածքը մոտավորապես 1800 քառ. կմ է, հիմնականում համընկնում է Մեծ Հայքի Սյունիք նահանգի 12 գավառներից մեկի՝ Աղահեճքի տարածքին: Այն առաջին անգամ հիշատակվում է VII դարում, «Աշխարհացոյցի» մեջ: XIII դարից սկսած՝ Աղահեճք գավառը կոչվել է Քաշաթաղ եւ Խոժոռաբերդ բերդերի անունով: Քաշաթաղը, ընդգրկելով նախկին Աղահեճք գա-

* Հոդվածն ընդունվել է 01.08.2013:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը:

վառի հարավային եւ հարավ-արեւմտյան հատվածը, հետագա դարերում նշանակալի դեր է խաղացել հայոց պատմության մեջ, ինչը փաստում են ժամանակակիցների բազմաթիվ հիշատակությունները: XVI դ. գավառն ավելի հաճախ հիշատակվում է Քշտաղ՝ հապավված անվանաձեւով, որպէս հայկական իշխանություն՝ Խանածախ կենտրոնով:

XVIII դ. 2-րդ կեսին գավառի մի շարք բնակավայրեր հայաթափվեցին: Նույն դարի վերջերին եւ, հատկապէս XIX դարի ընթացքում գյուղերի մեծ մասը զբաղեցրին քրդական ու թյուրքական խաշնարած ցեղերը:

Աղահեճքի տրոհումից հետո նրա հյուսիսային եւ հյուսիս-արեւելյան մասում տեղորոշվող Խոժոռաբերդ գավառի վերաբերյալ պատմական աղբյուրները խիստ ժլատ են: XVI-XVIII դդ. գավառամասն առավելապէս հայտնի էր Մաղավուզ անվամբ, իսկ XIX դ. սկզբներին հաճախակի հիշատակվում էր Չառիստ անվամբ[3]:

1918-20 թվականներին Լաչինի շրջանը, որպէս Լեռնային Ղարաբաղի հետ կապող տարածք, մասամբ վերահսկողության տակ առնվեց Անդրամիկ Օզանյանի ստորաբաժանումների, իսկ երկու տարի անց գրեթէ լրիվությամբ ազատագրվեց Գարեգին Նժդեհի եւ Դրաստամատ Կանայանի զորամասերի կողմից: Ուստի պատահական չէ, որ 1920-ական թվականներին Լեռնային Ղարաբաղը եւ Հայաստանը ընդհանուր սահման ունեին Լաչին-Չաբուխ նեղ շերտով: Այդ մասին են վկայում 1920-ականներին տպագրված խորհրդային քարտեզները: Սակայն պատկերը լրիվությամբ փոխվեց 1930-ականներին: Սահմանների այդ վերաձեւումն անմիջականորեն կապված էր Քրդական մշակութային ինքնավարության, այսպէս կոչված՝ Կարմիր Քրդստանի հետ: «Քրդական ուեզդը» գոյություն է ունեցել 1923-29 թթ., սակայն առանց ընդգծված որոշակի սահմաններով տարածքի, իրավաբանորեն ձեւակերպված կարգավիճակի: Հայաստանի եւ Արցախի արանքում Կարմիր Քրդստանի ստեղծման նպատակը այդ տարածքում քրդեր բնակեցնելն էր ու երկու հայկական կազմավորումների արանքը սեպ խրելը, ինչն էլ տեղ գտավ քրդերի «ինքնավարությունը» առեղծվածային պայմաններում վերացնելուց հետո: Երբեմնի հայկական տարածքների յուրացումը կատարվեց քաղաքական, գաղափարախոսական խարդավանքների միջոցով: Ասպարեզ հանված «Կարմիր Քրդստանի» պատրանքը լայնորեն գովազդվում էր, ներկայացվում որպէս Ադրբեջանի ինտերնացիոնալ քաղաքականության հերթական հաղթանակ: Անդրֆեդերացիայի ԿԳԿ նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստը օրինականության երանգներ հաղորդեց Հայաստանի ու Արցախի միջեւ քրդական սեպի խրման գործընթացին: Հայ բոլշեւիկների «խորը ըմբռնման» պայմաններում հասնելով իրենց նպատակին՝ Ադրբեջանի ղեկավարներն անմիջապէս վերացրին «Քրդական ուեզդը», հալածանքներ սկսեցին քրդերի նկատմամբ: Դրանով նախ կասեցվեց քրդերի «ազգային զարթոնքը», եւ ապա Լաչինից ու նրա շրջակայքից դուրս մղված քրդերը բնակվեցին շրջանի խորքերում՝ տեղահանված հայերի բնակավայրերում՝ լուծելով Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջեւ սեպն ընդլայնելու ստրատեգիական խնդիրը: Իսկ քրդերից դատարկված գյուղերն արտոնյալ պայմաններով բնակեցրին ավելի բարեհույս տարրերով՝ ադրբեջանցիներով... [4]

Հայաբնակ Արցախը Սյունիքից բաժանող Լաչինը 1950-ական թվականներին

սկսեց արագ թափով կառուցապատվել: Ընդամենը 1-2 տասնամյակի ընթացքում այն իր զբաղեցրած նախնական սահմանների համեմատ ընդարձակվեց ավելի քան 10 անգամ, իսկ բնակչության արհեստական աճը կազմակերպվեց Ադրբեջանի այլ շրջաններից փոխադրված ադրբեջանական տարրի հաշվին:

1988-ից սկսած՝ Լաչինը վերածվել էր մաքառող Արցախը Հայաստանից մեկուսացնող գլխավոր ռազմական հենակետի: Միաժամանակ, այն հայաբնակ Բերդաձորի ենթաշրջանն ու Գորիսի շրջանի սահմանամերձ գյուղերն ասպատակող ավազակաորջ էր դարձել: Մինչև 1992 թ. մայիսը Լաչինով էր տեղափոխվում Շուշիի, Նաբիլարի, Ջանհասանի, Քյոսալարի, Կարազյավի եւ ադրբեջանական այլ կրակակետերի սպառազինությունը: Հետեւաբար Լաչինի ռազմական հենակետի վնասագերծումը թելադրված էր շուրջ չորս տարի շարունակվող շրջափակումը վերացնելու եւ Հայաստանի հետ ցամաքային կապը վերականգնելու, Արցախի դեմ ագրեսիայի օջախներից մեկը վերացնելու, պատմական արդարությունը վերականգնելու անհրաժեշտությամբ:

Շուշիի ազատագրումից եւ Ջանհասան, Քյոսալար գյուղերի կրակակետերը ճնշելուց հետո նպաստավոր նախադրյալներ ստեղծվեցին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ-ի) ռազմավարական հաջողությունը զարգացնելու համար: Շուշիի ազատագրման մարտական հրամանում, ի շարս այլ խնդիրների, նախատեսված էր նաեւ շարունակել հարձակումը եւ ազատագրել Բերդաձորի ենթաշրջանը[5]:

Այդ խնդրի լուծումը սկսվեց մայիսի 11-ի երեկոյան՝ Շուշիում դիրքերն ամրապնդելուց եւ ԼՂՀ սահմանների մի քանի հատվածներում հակառակորդի հարձակումները հետ մղելուց, այսինքն՝ համեմատաբար նպաստավոր պայմաններ ապահովելուց հետո: Մայիսի 12-ին վերահսկողության տակ առնվեց Ջառիստ գյուղը, քանի որ ԻՊՈՒ շտաբն օպերատիվ տեղեկություններ էր ստացել հակառակորդի հարձակման անցնելու մտադրության վերաբերյալ: Ժ. Սեֆիլյանի, Ա. Առաքելյանի եւ Ա. Ղարամյանի հրամանատարությամբ ԻՊՈՒ ստորաբաժանումները հուսալիորեն փակեցին դեպի Շուշի հակառակորդի հնարավոր սողանքները: Լիսազոր-Ջառիստ ուղեհատվածը նախօրոք ականապատվեց: Մայիսի 13-ին, հակառակորդի մարտական տեխնիկան ու հետեւակը հարձակման անցան՝ Ջառիստ ներխուժելու եւ դեպի Շուշի շարժվելու նպատակով: Սակայն ականի վրա պայթած տանկը եւ նռնականետով շարքից հանված զրահամեքենան փակեցին ադրբեջանական զրահատնիխիկայի հետագա առաջխաղացման ճանապարհը: Ծայր առած փոխհրաձգության ընթացքում կորցնելով շուրջ 40 զինվոր՝ հակառակորդը նահանջեց: Պահիր հարմար էր հակահարձակման անցնելու համար: Լիսազոր-Բերդաձոր գծով ռազմագործողությունն սկսվեց հիմնականում երկու ուղղություններով՝ խճուղու աջ ու ձախ կողմերով եւ Ջանհասան-Քյոսալար գյուղերից: Ճնշելով միայն 2 գյուղերում դրսևորված հակառակորդի դիմադրությունը՝ վերահսկողության տակ առնվեցին Շուշիի շրջանի շուրջ 17 գյուղեր: Այնուհետեւ հարվածային զորախմբերը դուրս եկան Լիսազորից աջ եւ ձախ ընկած բարձունքները, որոնցից հատկապես հեռուստաաշտարակի բարձունքի գրավումը կանխորոշեց հենակետի վերածված այդ բնակավայրի ճակատագիրը: Լիսազոր - Մեծ շեն - Հին շեն գծով հարձակումը շարունակեցին Ակնաղբյուրի, Ավետարանոցի, Շոշի, Սղնախի, ՀՅԴ-ի վաշտերը ու այլ ստորաբաժանումներ

եւ առանց մեծ դիմադրության՝ ազատագրեցին Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը: Մայիսի 18-ի առավոտյան, հրետանային նախապատրաստությունից հետո, ԻՊՈՒ կազմավորումները հարձակման անցան Լաչինի ուղղությամբ եւ վերահսկողության տակ առան այն: Հակառակորդն այլեւս ի վիճակի չէր լուրջ դիմադրություն ցույց տալու: Նրա համընդհանուր բարոյալքմանը նպաստել են ինչպես Շուշիի փայլուն ռազմագործողության հետեւանքով կրած պարտությունը, այնպես էլ Գորիսի շրջանում ստեղծված հրետանային միավորման՝ «Դնեպրի» ակտիվ գործողությունները[6]:

Լաչինից ԻՊ ուժերը դուրս եկան Հայաստանի Հանրապետության սահմանը, միաժամանակ բացազատվելով դեպի Քելբաջարի ու Ղուբաթլուի շրջանները: Տեղին են համարում անդրադառնալ որոշ հեղինակների այն պնդմանը, որ Շուշիի ազատագրումից հետո, իբր, կարելի էր հընթացս բացել նաեւ Լաչինի միջանցքը: Ըստ իս, այդ տեսակետը զուրկ է լուրջ փաստարկներից ու հիմքից: Եվ ահա թե ինչու...

Շուշիից ու Ջանհասան-Քյոսալարի ռազմական հենակետից նահանջած հակառակորդի ուժերը, թեւ ջախջախված ու բարոյալքված, բայց Շուշի-Լաչին խճուղու երկայնքով, որոշակի բնագծում կարող էին շրջվել ու համառ դիմադրություն ցույց տալ՝ համագործակցելով տեղի պահեստային ուժերի հետ: Այդ հնարավորությունը բացառողներն, ակներեւաբար, թերագնահատում են հակառակորդին ու անտեսում նրա հրամկազմի՝ զորքի խուճապը կանխելուն եւ մարտակարգերը վերականգնելուն ուղղված ջանքերի հավանականությունը (նման դեպքերում, որպես կանոն, անպայման հրամկազմը խիստ միջոցներ է ձեռնարկում խուճապը կանխելու եւ կարգուկանոնը վերականգնելու, զորքը կառավարելի դարձնելու ուղղությամբ):

Վերոհիշյալ կարծիքի հեղինակներն անտեսում են ԼՂՀ սահմանների ողջ երկայնքով հակառակորդի մեծաթիվ ուժերի ու միջոցների կուտակման փաստը եւ մի քանի ուղղություններով ԼՂՀ ներխուժելու սպառնալիքը: Անշուշտ, անմտություն կլիներ տարվել Լաչինի ուղղությամբ հակառակորդին հետապնդելով եւ միջոցներ ձեռնարկել ԼՂՀ սահմանների պաշտպանությունը ուժեղացնելու, հակառակորդի անխուսափելի հարձակմանը դիմագրավելու ուղղությամբ: Սա ավելի հասկանալի է դառնում, երբ հաշվի ենք առնում, որ Շուշիի վրա գրոհել են հիմնականում ընտրյալ կամավորականները, ասել է թե՛ մարտունակ ու փորձառու ուժերը, առանց որոնց ներգրավման, թերեւս, դժվար կլիներ հետ շարտել հակառակորդի՝ Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու շրջաններ ներխուժած խմբավորումներին:

Հայտնի է, որ առանց հետախուզության, հակառակորդի ուժերի ու միջոցների, մի խոսքով՝ հնարավորությունների իմացության արկածախնդրություն է համեմատաբար մեծ խորությամբ մխրձվել հակառակորդի մարտակարգերը, մեր պարագայում՝ Լաչինի միջանցքը բացելու փորձ ձեռնարկել, մանավանդ ՀՀ-ից անմիջական օգնության չնչին հավանականության պայմաններում (քաղաքական նկատառումներով):

Իրավիճակը միանգամայն այլ էր արդեն մեկ շաբաթ անց, ինչն էլ անհապաղ օգտագործվեց Լաչինի ուղղությունում կուտակված հակառակորդի խմբավորումը ջախջախելու նպատակով:

Լաչինի ազատագրմամբ՝ մաքառող Արցախն անմիջական ցամաքային կապ հաստատեց Հայաստանի հետ՝ զենքի ու ժով լուծելով դաժան շրջափակման վերացման հրատապ խնդիրը: Իսկ դա նշանակում էր՝ կյանքի ծանապարհի բացում, արհեստականորեն մասնատված ժողովրդի երկու հատվածների գործնական վերամիավորում: Լաչինում կրած պարտությունը ավելի սրեց Ադրբեջանի ներհակությունները, միջազգային հանրությանը կանգնեցրեց փաստի առաջ՝ ստիպելով վերանայել առկա մոտեցումները Արցախյան հիմնախնդրին:

Ներկայումս քաղաքը ԼՂԴ Քաշաթաղի շրջանի վարչական կենտրոնն է, հայտնի է Բերձոր անվամբ, բնակչությունը երկու հազարից ավել է: Քաղաքում կան երկու միջնակարգ, երաժշտական, գիշերօթիկ եւ մարզարվեստի դպրոցներ, երկրագիտական թանգարարան-պատկերասրահ, շրջանային հիվանդանոց: Գործում են մի շարք ձեռնարկություններ, փայտամշակման եւ մետաղամշակման արտադրամասեր, այլադաս: Բերձորի հոյակերտ Ս. Համբարձման եկեղեցին օծվել է 1998 թ. մայիսի 31-ին: Վերջերս տեղի ունեցած գործարար խորհրդածողովը և Արցախի իշխանությունների հոգածությունը Քաշաթաղի շրջանի զարգացման հեռանկարներ է բացում: Հիրավի, միայն ծաղկուն ու ամրակուն Քաշաթաղ-հայրենիքի կերտումը կարող է լինել ազատագրական պայքարում զոհված բոլոր հայորդիների հիշատակի խնկարկման լավագույն արտահայտությունը:

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այվազյան Յ. Ս., Հաղթանակած բանակի զեներալը, Եր., 2001, Բալայան Ջ., Դժխք եւ դրախտ, Եր., 1995, Նույնի՝ Բժիշկ Սարությանը եւ նրա «Պատերազմի հետքը երկար է մնում» գիրքը, Եր., 1999, Բաղդասարյան Դ., Դիմակայություն (հուշագրություններ), Երեւան, 1998, Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Եր., 2001 Նույնի՝ ՊԲ պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմաճակատներում, Ստեփանակերտ, 2008, Խաչատրյան Յ., Ղազարյան Գ., Սարգսյան Ս., Հաղթանակներն ինչպես եղել են. ազդականչը 44, Երեւան, ԶԶԶ, 2008, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան 1 հատ., Ջ. Յ. Բալայան (նախագահ), Յ. Ս. Խաչատրյան (գլխ. խմբ. եւ նախագահի տեղակալ, հատորի պատասխանատու) եւ ուրիշներ), Երեւան, ԶԶԶ, 2004, Սարգսյան Ս., Հայկական բանակ, Եր., 2002, Ուլուբաբյան Բ., Արցախյան զոյապայքարի տարեգրությունը, Եր., 1997, Арутюнян В., События в Нагорном Карабахе. Хроника, часть IV, V, Ер., 1997, Ступишин Вл., Карабахский конфликт (1992-1994), Москва, 1998, Thomas de Waal, Black Garden: Armenia and Azerbaijan: Through Peace and War. New York University Press. NY, 2003 եւ այլն:
2. Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Երեւան, 2000, էջ 121-123, Ոգու եւ զենքի փառավոր հաղթանակը, «Հայկական բանակ», Երեւան, 2002, N 1-2, էջ 73-86, Քառանյա շրջափակման ճեղքումը, «Մարտիկ», թիվ 21, 20-24 մայիս, 2002թ., էջ 3, Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության զուգահեռներում, (հոդվածների ժողովածու), գիրք առաջին, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս», 2009, էջ 79-83:
3. Ավելի մանրամասն տես Կարապետյան Սամվել, Հայ մշակույթի հուշարձանները

Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում: Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ, 1999, էջ 125-185:

4. Տե՛ս Շահեն Սկրտչյան, «Կարմիր Քրդստանի» եւ Հայաստանից գողացված Լաչինի միջանցքի առեղծվածը. «Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա» գրքում, Եր., 1996, էջ 5-10:

5. Տե՛ս Հարությունյան Ս. Ա., Արցախյան պատերազմի սկիզբը եւ Շուշիի ազատագրումը: Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 92:

6. Բաղդասարյան Դ. Ս., Դիմակայություն(հուշագրություններ): Եր., 1998, էջ 113-120, Արցախյան ազատամարտ. Շուշիի ազատագրումը եւ Լաչինի միջանցքի բացումը. 1992թ. մայիսի 8-18/ քարտեզի եւ ուրվագծային ակնարկի հեղինակ Ռաֆիկ Թադեւոսյան: Եր., 1999:

РЕЗЮМЕ

К вопросу о необходимости прорыва блокады НКР

Мгер Арутюнян

В статье на основе архивных материалов и выводов научных трудов обоснована необходимость прорыва 4-летней блокады НКР. Прорыв блокады Арцаха открыл дорогу жизни и практически объединил две разъединенные части нашего народа. Установление через лачинский коридор сухопутной связи с Арменией явилось одним из самых больших достижений Арцахской войны, которая сделала независимость НКР реальной.

SUMMARY

On necessity of breaking the blockade of the NKR

Mher Harutyunyan

The article, basing upon the archival data and conclusions of scientific labours justifies the necessity of breaking the four-year blockade of the NKR. The break of the blockade in Artsakh opened the way in the world life and actually joined two separated parts of our people. The establishment of the land connection with Armenia through the Lachin corridor was one of the greatest achievements of the Artsakh war, which made the independence of Nagorno-Karabakh real.